ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Խնդրեմ հետևեալ իմ կարճ գրութեան տեղ շնորհէք «Մուրճ» ամսագրում։

Որովհետև բանաստեղծութիւնները կազմում են «Մուրճ» ամսագրի խնամքով տանուող բաժիններից մէկը, որի զարգացման վերայ, որպէս երևում է, խմբագրութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում, ուստի թող թոյլ տրւի ինձ մի քանի խօսք ասելու։

Մեր ժամանակակից բանաստեղծութիւնը դեռ մանուկ և անհաստատ դրութեան մէջ է, նա այժմ է սկսում կազմակերպւել և նոր նոր միայն փորձեր է անում մտնելու մեր ժողովրդի խորշերը և շօշափել մեր հասարակական գործողի զգացմունքների և վրդովմունքների աշխարհը։ Ոտանաւոր գրողների, լանգեր չօրինողների թիւը մեծ է. բայց և մեծ ջանք է հարկաւոր այդ մեծ կոլոից մարգարիտներ դուրս խլելու, նոցա զտելու և նոցա ամբարելու մեր ապագայ բանաստեղծութեան զարդացման և կազմակերպութեան համար։ Դա ի հարկէ շատ դժւար գործ է, բայց ինչպէս երևում է «Մուրճ»-ի խմբագրութիւնը ուրախութեամբ և չօժարութեամբ է տանում այդ, որովհետև ինչպէս երկու տարւայ փորձը ցոյց է տալիս, նա վարձատրւում է։

Եւ մեր համոզմունքը, որպէս և ընթերցողներից շատերի վկայութիւնները միանգամայն մխիթարիչ կարող են լինել «Մուրճ»-ի խմբագրութեան համար։ Մի քանի բանաստեղծներ, որոնք ամիսներ շարունակ դեռ տեղնել են իրանց ոտանաւորները այդ ամսագրում, գրաւել են իրանց համար հաստատ խորշեր ընթերցողների սրտերում, ծնեցրել են նոցա մէջ մաքուր, ազնիւ և վեհ զգացմունքներ։ Քաջալերութիւնը և անկեղծ համակրութիւնը չէ թողնում կորչելու, սառչելու և ոչնչանալու այդ մեր երիտասարդների առաջին փորձերը։ Առողջ քննադատութեան ազդեցութեան տակ այդ նորակազմ բանաստեղծութիւնը կ'ամրանայ և լաւագոյն ապագայի համար հող կը պատրաստի։

Բայց ինչ ենք տեսնում մեր շուրջը։ Առողջ քննադատութիւն, անկեղծ համակրութիւն, ազնիւ վերաբերմունք։

Դժբաղդաբար ոչ։

Ամբողջ երկու տարի է, որ «Մուրճ»-ում երեւացող նոր բանաստեղծութեան փորձերը զանազան թիւր նկատողութիւնների, կասկածաւոր ակնարկների են ենթարկւում, ակնարկների, որոնց մէջ իզուր ենք որոնում մեզ հետաքրքրող խնդրի մասին գործին վերաբերեալ մի խելացի խօսք, մի իմաստալից խորհուրդ, մի նպատակայարմար նկատողութիւն։

Մէկը այդպիսի քննադատներից (տե՛ս Խ. Ազ—լեր*) այժմ, օգտւելով երեւան գալուց մի այնպիսի խայտառակ և անճոռնի ոտ կապողի, որ հեռու յարաբերութիւն անգամ չունի մեր երիտասարդ բանաստեղծների գործունէութեան հետ՝ աններելի կերպով սուեր է աշխատում տարածել նոցա վերայ և աժան կերպով սրախօսելով ու ոստումներ անելով՝ յայտարարում է «Մուրճ»-ին, իբրև մեղսակից այն անհամութիւններին, որոնցով լիքն են շատ ոտանաւորների գրւածքները և որոնց ամենակատաղի և ամենաէական թշնամին այն ամսագիրն է, որ նոցա բարուոքելուն նւիրւած է և որ իսկապէս որոնում է բանաստեղծութիւն և որ յուսով եմ ուշք չի դարձնիլ այն տեսակ ծամածռութիւնների վերայ, երբ, յանուն Պատկանեանի, Նալբանդեանի, Դուրեանի, Պէշիկթաշլեանի, փորձ են փորձում ընդհանուր պարսաւանքով խեղդել և ստուէրի մէջ պահել մեր նոր բանաստեղծութեան համակրելի ներկայացուցիչներին։ Անկեղծ վկայում եմ, մեծ. պ. Խմբագիր, որ սա մի ահագին մեծամասնութեան կարծիքն է, որ այն բանաստեղծ-աշխատակիցները, որոնք տեղ են գտել Ձեր ամսագրում, իրանց վերայ գրաւում են ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը և որ առնւազը հասարակութեան այդ մասը լրջութեամբ է հետեւում «Մուրճ»-ի այդ բաժնին։ Յոյս ունեմ, որ քաջալերական վկայութիւնների կարօտ չէք զգում Դուք՝ Ձեր բռնած ճանապարհով անսայթաք կերպով ընթանալու համար։*

Ընդունեցէք իմ խորին յարգանքները Ձեր ամսագրի ուշադիր ընթերցողներից մէկից։

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ։—*Մեր ընթերցողներին մենք արդէն մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսել «Մուրճ»-ի բանաստեղծութիւնների բաժնի մասին։ Մենք արդէն յայտնել ենք, որ «Մուրճ»-ի այդ բաժինը իրաւամբ գրաւել է ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը։ Այդ երեւոյթը կարելի է բացատրել միմիայն նորանով, որ, ինչպէս մենք ենք կարծում, «Մուրճ»-ում հիւրընկալւող բանաստեղծ-աշխատակիցները պատկանում են այնպիսի ուղղութեան, որով միայն մեր բանաստեղծական գրականութեանը կարելի է զարկ տալ և յարգի հասցնել գրականութեան մի կարեւոր ճիւղ, որը դրեթէ դադարել էր սնունդ առնել 60-ական թւականներից դէս։ Այս վերջին քսան տարիներում (մի կողմ թողած Գա-*

մառ-Քաթիպայի) լոյս էին տեսնում ոտանաւոր գրուածքներ, բայց փառք Աստուծոյ՝ գրքերը չեն կազմում մի դրականութիւն. քանի որ բաւական չէ ոտանաւորներ գրել որ բանաստեղծական դրականութիւն ստեղծելու։ Թէ չէ այս վերջին 20—25 տարիներում բազմաթիւ ոտանաւոր գրուածքներ են լոյս տեսել, բայց դոքա ընթերցող հասարակութիւն չը ստեղծեցին։ Ի բաց առած Գամառ-Քաթիպային, մինչ այս վերջին ժամանակներում յայտնուած երիտասարդ բանաստեղծական ուժերը, սկսած 60-ական թուականների վերջերքից, ոչ մի բանաստեղծ չը կպցրեց իւր անունը հայոց գրականութեան հետ։ Եւ նոյն իսկ ինքը Գամառ-Քաթիպան իւր անունը սերտ կապած է 60-ական թուականներին։ Ուրեմն նոր բանաստեղծական տաղանդների կողմից կարելի է համարձակ ասել, որ վերջին տարիները կատարեալ դատարկութիւն են ներկայացնում։ Այդ տարիներում ասպարէզը մնացել էր միմիայն մեր աշուղներին կամ աշուղանման ոտանաւորներ գրողներին, որոնք ոչնչով չէին կապուած հայկական գրականութեան նոր հոսանքների հետ։ Նոյն իսկ Րաֆֆին, իւր Փունջ'ի առաջին հատորով չը կարողացաւ վերակենդանութիւն տալ 60-ական թուականներում ընդհատուած հայոց բանաստեղծութեան զարգացմանը։ Րաֆֆիի Փունջը մատնեց գրեթէ կատարեալ մոռացութեան։ Րաֆֆին այլ գործ էր կատարում՝ նա պատրաստում էր հասարակութիւն վէպի համար և այդ նրան յաջողեց։ Հիւսիսափայլի ժամանակ Րաֆֆիին ժամանակակից Գէորգ Բարխուդարեանը, յետագայ տարիներում, 70-ական թուականներում, Փորձ ամսագրում տպուած իւր թարգմանական աշխատութիւններով՝ նշանաւոր գանձ մուծնելով մեր բանաստեղծական գրականութեան մէջ, այնուամենայնիւ զարկ չտուեց հայկական բանաստեղծութեան։ Գամառ-Քաթիպայի և Շահազիզի անունների հետ կապուած հայկական նորայոյն բանաստեղծական գրականութիւնը այդպիսով էլ մնաց առանց շարունակութեան։ Այդ վաղուցուայ լռութիւնը համարձակ կարող ենք ասել, որ ընդհատուեց մի առաջին անգամ պ. Յովհաննէս Յովհաննիսեանի գրքոյկով, 1888 թուականին, «Մուրճ»-ի երեւալուց փոքր ինչ առաջ։ Պր. Յովհաննիսեանի գրքոյկի երեւալը ընդհանրապէս ողնորութեամբ ողջունուեց, որ շատ բնական էր. դէհ վերջապէս մէկը կարողութիւն ունեցաւ հայկական քնարի արդէն շատ երկար տարիների լռութիւնից յետոյ՝ բանաստեղծական ձայներ լսեցնել հայ ընթերցողների ականջին։ Շողոքորթութեան ձայներ չէին դոքա, այլ երկար տարիներով քաշած կարօտի ձայներ

Այդպիսի ձայներ չը լսեցին, երբ Բաֆֆին իւր Փունջ'ի առաջին հատորը հրատարակեց, չը նայած որ Բաֆֆիի անունը դեռ այն ժամանակ համալսական էր, մինչդեռ Յովհաննէս Յովհաննիսեանը դեռ ևս ոչ ոքին յայտնի չէր։ «Մուրճ»-ի աշխատակից չէր նա, բայց «Մուրճ»-ը այդ նոր բանաստեղծին երկարօրէն քննադատելու պատիւը տուեց, որից դեռ չը պէտք է եզրակացնել, թէ «Մուրճ»-ը ուրացաւ Յովհաննիսեանի քանքարը, որպէս և նորա քանքարը ընդունելով՝ չը պէտք է կարծել թէ «Մուրճ»-ը երաշխաւորեց նորա ապագան։

Գրեթէ միաժամանակ Յ. Յովհանիսեանի գրքոյկի երևալուն հետ, 1889-ի սկզբից, «Մուրճ»-ի երևալով, երևան եկան մի շարք ոտանաւոր գրողներ, որոնց մէջ կային այնպիսիներ, որոնք «Մուրճ»-ից առաջ մի մի աննշան փորձեր արել էին մեր ուրիշ հրատարակութիւններից մէկի կամ միւսի մէջ, իսկ միւսները նոր սկսեցին երևալ ասպարիզի վերայ. բայց թէ առաջինները և թէ վերջիններս որ և է հրատարակութեան հետ կապած չէին իրանց անունը։ Եթէ մենք թուելու լինենք այն բոլոր անձերի անունները, որոնք մեզ առաջարկել են իրանց ոտանաւորները տպագրելու, գուցէ «Մուրճ»-ի մի երեսը չը բաւէր. և ամենքին համահաւասար կերպով խրախուսելը մեր կոչումը չէինք համարում։ Հարկաւոր էր, անհրաժեշտ էր ընտրութիւն անել։ Այդ ընտրութիւնից գուցացել է այն, ինչ այժմ կայ «Մուրճ»-ի երկու տարեայ տետրների մէջ։ Այդ զոման գործի մէջ մենք, ընդհանուր առմամբ, որքան ենք յաջողել, ապագան այդ մասին աւելի դրական պատասխան կը տայ. բայց արդէն մի բան չուտով պարզուեց, որ մենք վկայել ենք և այսօր էլ կը վկայենք՝ հիմնուելով բազմաթիւ ուրիշ վկայութիւնների վերայ. այդ այն է, որ ընթերցող հասարակութիւնը և մանաւանդ նորա ամենաքննադատական մասը անտարբեր չէ դէպի «Մուրճ»-ի այդ բաժինը. այդ բաժնի մէջ լուրջ հասարակութիւնը ընթերցանութեան մի առարկայ է գտել, որ նա զուր էր որոնում առաջ։ Մենք որ անուններով առհասարակ չենք շլացել մեր ամսագրի միւս բաժինների նկատմամբ, չենք ընկել անունների լետևից նաև բանաստեղծութեան բաժնի նկատմամբ։ «Մուրճ»-ը այլապէս վարել չէր կարող, նա՝ որ ի սկզբանէ չի ուզեցել հիմնել իւր գոյութիւնը պրոտեկցիայի վերայ։